ԱՅ ԷՅ ԲԻ ԲԻԶՆԵՍԻ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ, ՀԶՈՐԱՑՄԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐԻ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ՀԱՄԱՏԵՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ք.Երևան «30» հունվար, 2019թ.

Այ Էյ Բի Բիզնեսի միջազգային ակադեմիան, ի դեմս Տնօրեն Ա. Մարտիրոսյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, և «Երևանի Պետական Համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղը, ի դեմս տնօրենի պաշտոնակատար Ա. Ցուցուլյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կողմեր), կարևորելով Տավուշի մարզում երիտասարդների զարգացման, հզորացման, մասնագիտական վերապատրաստման և կարիերայի ուղղորդման անհրաժեշտությունը, համաձայնեցին հետևյալի մասին.

1. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Երկու կողմերի համատեղ ուժերով նպաստել մարզի երիտասարդների ներուժի զարգացմանը և աշխատաշուկայում նրանց մրցունակության բարձրացմանն ուղղված ծրագրերի իրականացմանը:

Կողմերը, համապատասխանաբար կնքելով սույն համագործակցության հուշագիրը, ամրագրում են սահմանված նպատակի հասնելուն ուղղված իրենց պատրաստակամությունը: Սույն հուշագիրը միջոցների հատկացման պարտավորագիր չէ: Այն ցանկացած Կողմի համար օրենքով պարտադրվող պարտավորություն չի համարվում, կամ իրավունքներ չի տրամադրում որևէ այլ Կողմի համար:

2. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Այ Էյ Բի Բիզնեսի միջազգային ակադեմիան պատրաստակամ է

1. Ստեղծել արդի մասնագիտական գիտելիքներով զինված դասընթացավարների ակտիվ հաբ՝ տրամադրելով մեթոդական, տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն սույն հուշագրի շրջանակներում իրականացվող ծրագրերում որպես դասընթացավարներ, ֆասիլիտատորներ, խորհրդատու, մենթորներ ներգրավելու նպատակով:
2. Ստեղծել մարզի գործատուների օնլայն հարթակ, ծրագրերին մասնակցած և վերապատրաստված երիտասարդներին իրենց կազմակերպություններում ներգրավվելու, գործընկերային կապեր հաստատելու և զարգացնելու, ինչպես նաև թափուր աշխատատեղերի մասին տեղեկատվություն տարածելու նպատակով:
3. Ստեղծել աշխատանք փնտրող մարզի երիտասարդների օնլայն հարթակ մասնագիտական հմտությունների զարգացման, տեղեկատվության ստացման և զբաղվածության բարձրացման նպատակով:
4. Ստեղծել սկսնակ ձեռներեցների և բիզնես գաղափար ունեցող երիտասարդների մարզային նորարար հաբեր մարզում ձեռներեցության զարգացմանն ուղղված ծրագրերում ներառելու նպատակով, որը կպաստի մարզի տնտեսական ակտիվությանը, նոր աշխատատեղերի ստեղծմանը:

ԵՊՀ ԻՄ-ը պատրաստակամ է.

1. Այ Էյ Բի Բիզնեսի միջազգային ակադեմիայի կողմից իրականացվող ծառայություններում, մասնավորապես՝ վերապատրաստման ծրագրերում ներգրավելու նպատակով ներկայացնել համապատասխան որակավորում ունեցող մասնագետների թեկնածություններ, ապահովել ծրագրի կոորդինացումը և մարզում անցկացումը: Ակադեմիայի կողմից մշակված մասնագիտական վերապատրաստումների և դասընթացների մեթոդաբանության գործիքների կիրառումը համաձայնեցնել Այ Էյ Բի Բիզնեսի միջազգային ակադեմիայի հետ, իսկ կիրառման դեպքում կատարել պարտադիր հղում և նշագրում: Մեթոդաբանությունները և նյութերը երրորդ կողմին տրամադրել բացառապես Այ Էյ Բի Բիզնեսի միջազգային ակադեմիայի համաձայնության դեպքում:
2. Փոխանցել մարզի գործատուների և թափուր աշխատատեղերի մասին տեղեկատվությունը: Մարզի աշխատաշուկայի արդի խնդիրները քննարկելու նպատակով գործատուների հետ կազմակերպել աշխատանքային հանդիպումներ : Կազմակերպել աշխատանքի տոնավաճառներ:

3. Աջակցել Այ Էյ Բի Բիզնեսի միջազգային ակադեմիայի ծրագրերի իրականացմանն ուղղված երիտասարդների հավաքագրմանը, տեխնիկական միջոցների տրամադրմանը, տեղեկատվության տարածմանը:
4. Աջակցել Այ Էյ Բի Բիզնեսի միջազգային ակադեմիայի կողմից նախաձեռնվող ձեռներեցության զարգացմանն ուղղված ծրագրերի իրականացմանը, մասնավորապես բիզնես գաղափարների հավաքագրման, մրցույթների կազմակերպման և այլ միջոցառումների կատարմանը:

3. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Կողմերը պարտավոր են առաջնորդվել համագործակցության հետևյալ հիմնական սկզբունքներով.

- փոխադարձ վստահություն,
- պատասխանատվություն,
- պարտաճանաչություն,
- որակի վերահսկում
- փոխըմբռնում և փոխզիջում,
- թափանցիկություն:

4. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4.1. Հուշագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է անժամկետ:

4.2. Սույն Հուշագրի ցանկացած փոփոխություն կատարվում է գրավոր և դառնում նրա անբաժանելի մասը:

4.3. Հուշագիրը կարող է դադարեցվել Կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ, մյուս Կողմին առնվազն 30 օր առաջ գրավոր տեղեկացնելու պայմանով:

4.4. Սույն Հուշագրի վերաբերյալ Կողմերի միջև ծագած անհամաձայնություններն ու վեճերը լուծվում են Կողմերի բանակցությունների միջոցով:

4.5. Սույն Հուշագիրը կնքվում է երկու բնօրինակից, հայերեն լեզվով, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

5. ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Այ Էյ Բի Բիզնեսի միջազգային ակադեմիա	«ԵՊՀ ԻՄ»
«Այ Էյ Բի Սենթր» ՓԲԸ Իրավաբանական հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 35, բն.16 Գործունեության հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, Ագաթանգեղոսի 2ա «Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ Հ/Հ 22029012437 3000 ՀՎՀՀ 02559327 Տնօրեն՝ Ա. Մարտիրոսյան	« Երևանի պետական համալսարան » հիմնադրամի Իջևանի մասնաճյուղ Հասցե՝ Տավուշի մարզ, ք. Իջևան ՈՒսանողական 3 « Արդշինբանկ »-ի Իջևանի մասնաճյուղ Հ/Հ 247610017094 ՀՎՀՀ 01506928 Տնօրենի պաշտոնակատար Ա. Ցուցույան

Հ.Տ. Կ.Տ.